# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

*Խորին շնորհակալութիւն ենք յայտնում այն բոլոր օտարազգի և Հայ ազգագրագէտներին, որոնք շնորհաւորելով մեր այս ձեռնարկութիւնը, խոստանում են աջակցել մեզ, ինչպէս նաև յայտնի բարեգործ Ազնուաշուք Ասպետ Ջաւոտին, Փարիզի առաջնակարգ Հայ ակնավառու Գ. Մարկոսեանին, Փարիզի Արևելեան լեզուների դպրոցի օգնական պրոֆէսոր Գ. Կալպակչեանին և երիտասարդ իշխան Գ. Գ. Ն. Ա. որոնք համակրելով մեր ձեռնարկութիւնը և կամենալով նպաստել հրատարակութեան՝ առաջին երկուսը քառասնական, իսկ վերջինները տասական օրինակ ներկայ գրքից նուիրեցին զանազան հիմնարկութիւններին։*

---

*Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում և Վիեննայի «Հանդէս ամսօրեայի» խմբագրութեան, որ փոխադարձաբար յանձն է առել բաժանորդագրութիւն ընդունել։ Արտասահմանից մեզ հասանելի դրամները պիտի ուղարկուին նրան՝ հետևեալ հասցէով.* Convent des RR. PP. Mechitharistes.

Vienne (Autriche)
VII/2 Mechitharistengasse 4.

---

*Տեղի սղութեան պատճառով ներկայ գրքում չկարողացանք ամփոփել «Արովեան՝ որպէս ազգագրագէտ» և Տայլորի «Հիմնարկութիւնների ուսումնասիրելու եղանակ» յօդուածները, որոնք հաւանականօրէն կը զետեղուին առաջիկայ գրքերում։*

---

*Առաջիկայ գրքում ազգագրական և մարդաբանական ընտիր գրքերի մի համառօտ քննութիւն տալուց յետոյ նոր լոյս տեսնող գրքերի մասին գրախօսութիւն կը տանք։*

---

*Մենք «Ջաւախք»-ի մասին նիւթերը հաւաքել ենք 1889 թուին, ամբողջ գաւառը շրջելով և գրի առնելով միայն մեր տեսածն ու լսածը։ Տեղի սղութեան պատճառով տարուայ կարևորագոյն տօների նկարագիրն ու գլխագիրների յիշատակարանները մնացին անտիպ։ Սրա երկրորդ մասը՝ ժողովրդական բանաստեղծութիւնները՝ բառերի և ոճերի ընդարձակ բաժնով, մօտ 300 երեսից բաղկացած, լոյս կը տեսնի անձնապէս մօտիկ ապագայում։ Այս աշխատութեան մէջ մենք առաջնորդուել ենք Պրօֆ. Դր. Խալաթեանի կազմած ծրագրով, որն առաջարկում ենք մեր բանահաւաքներին, որպէս մի անհրաժեշտ ուղեցոյց։*